


ՏԱՃԱՐ



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԿՐԹՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅԵՕՐԷՆ-ԽՄՐԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ


Բ. ՏՄՐԻ

ՇԱՐԱԹ, 20 ՕԳՈՍՏՈՍ 1911

ԹԻԻ 32

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- | | |
|--|------------------------|
| Հայ եկեղեցականութիւնը եւ «Տաճար» | ՄԱՆԴԱԿՈՒՆԻ |
| ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ. — Ամենամեծ նպատակը | ԳՐԻԳՈՐԻՍ |
| ՍԻՆԵՍԱՅ ԴՊՐՈՅ. — Ա. Ծագումն Սիւնեաց | ԴՆԼ. Ծ. Վ. ԳԱԼԵՄԵԱՐԵԱՆ |
| Կրօնք եւ դաստիարակութիւն. — Մտածումներ մեծ | Խ. Յ. Ս. |
| միասքերու | ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԳԱԼԵՄԵԱՆ |
| Ըսիր . . . (քերթուած) | |
| ԹԵԼԱԴՐԻԶ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ. — Քառասուն | |
| տարիքին կարգալ սորուեցաւ | |
| ՀՈԳԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ. — Հո- | |
| գեպաշտութիւն եւ նիւթապաշտութիւն դէմ | |
| դիմաց (Դ.) | ԳՐ. ԷՕԼՄԷՋԵԱՆ |
| ՅՈՒԼԻՈՍ ԵՒ ՊԱՄՓԻԼԻՈՍ. — Առաջին Գրիստոնեա- | |
| նէրու ժամանակուան պատմութիւն (Շար.) | ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ |
| ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան կարեւոր լուրեր | |



«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
դիմել առ Զարմայր Քաճաճայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պեօիկթաշ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارهني كليسا سنده «داجار» غزته سي مديري پاپاس زارماير افندي
Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՆՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Դաւառաց՝ տարեկան	40 դրուտ
Արսասահմանի համար	» 10 Ֆրանք
Ռուսիա	» 4 ռուբլի.
Ամերիկա	» 2 օղար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա.

Հինգ բաժանորդ զոնաղը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՆԵՐ ԿԱՆԽԻԿ ԵՆ
ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ Կ՛ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻՒՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻՍՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-
բելեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պօ-
ղոս Վրդ. Գաթթեանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեղին Բհնյ. Պօղար-
եան
ԱՖԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէլեան
ԲԱՐԵՐԴ. — Մ. Սահասեան էֆ.
ԴԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եպս.
Կիւլէսէրեան
ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕՁԱՍ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐՁՆԿԱ. — Տ. Մկրտիկ Բհնյ. Թորոսեան
ՉՄԻՒՌՆԻԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Դաւուստ հնյ. Տ.
Դաւուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.
Սաատէթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թորքաթեան
ԿԻՒՄԻԻԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Բհնյ.
Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Բէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ. — ՊԱՆԸՔԻՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մաղլըմեան
ՊԱՂՏԱՍ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպիսկ. Կէօմըիւքճեան
ՌՈՒՍՃՈՒԲ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Դէորդ Ծ.
Վրդ. Աւլանեան
ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապաշեան
ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաշեան.
ՄԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեառն Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմիսիոս Բհնյ. Տրէզ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Դէորդ Բհնյ. Թէրզեան.
ՓԱՐԻՉ. — Հոգեւոր Տեառն Տ. Վառմշա-
պուհ Բհնյ. Բիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ. — Տ. Տահատ Բհնյ. Դերձակեան
ՖԻԶՁՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 20 ՕԳՈՍՏՈՍ 1911

ԹԻԻ 32

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒ "ՏԱՃԱՐ"

Արժ. Տ. Դարեգլին Բախանայ
Պողոթնանի.

Ձեր «Հայ Եկեղեցականութիւնը» վեր-
նագրով գրութիւնը կարդացի Տաճարի
Ձեռք թիւին մէջ.

Տէր Հայր. դուք բուն նախնա-
նորութիւնով մը լեցուն, ու նոյնքան
աւելի ցասկոտ ու արդարացի ձեր դանգա-
ներուն մէջ արդի եկեղեցականութեան
պիտի կը տեղայիք հարուածներ անխորա-
պէս: Դուք անդուստի տեսնով մը կ'ուզէիք
շատ բարձր ու պարտաճանաչ տեսնել Հայը
ու Հայ կղերը, ու զայն Տաճարին մէջ գրիչ
շարժող, իր ժողովուրդը առջնորդող,
անոր ցաւերուն ու վէրքերուն ճարտար
վիրաբոյժ, ու Տաճարով ժողովրդին խօսող,
ու այդ Տաճարն ալ շատ ծաւալած, ու ծառա-
յէր օգտակարապէս հովիւին ու հօտին, ու
պայծառացնէր ուր սերեք որ տարածուէր,

Արդարեւ ձեր բուն նախնաձայնորու-
թիւնը չնորհաւորելի ու արդարացի, ու ձեր
գանգատները գովելի էին: Թէ ինչո՞ւ ամ-

բողջ Հայ եկեղեցականութիւնը չի խըմ-
բուիր Տաճարին մէջ իր պարագն ու գրիչը
շարժելով ու ի գործ ածելով, որովհետեւ
քիչերն են որ թղթին ու զրթին ընտանի
են ու պարտաւորած են զայնս ունենալ,
անով տքնիլ մինչեւ ցգերեզման: Ու արդ-
եօք չե՞նք կրնար ըսել թէ՛ թո՛ղ բանիւ ու
գրչով խմբուիլ շուրջը, մինչ իսկ Տաճարը
ունենալ ու կարգալ անգամ գուցէ աւե-
լորդ յոգնութիւն սեպողներ գտնուին:
Այս կէտը աւելի ցաւալի չէ՞ք գտնիր, Տէր
Հայր:

Երկու որոշ եւ շատ ճշմարիտ իրողու-
թիւններ մէջտեղն են, մեր ըսածը ապա-
ցուցանելու.— Առաջին. մեր մէջ ընթի-
րասիրութիւնը չէ՛ այնչափ տարածուած,
ոչ ալ նոյն ինքն այն գաղափարը թէ՛ ինք-
նադարպասման դպրոցը անհամեմատ առա-
ւելութիւններ ու այնչափ օգտակարու-
թիւններ ունի, ու օրինակներն ու փոր-
ձերն ալ զայնս կը հաստատեն, ու այս
ճշմարտութեան չհաւատալը Արեւին դէմ
վարագոյր քաշելու անհետեւանք տքնու-
թիւնը պիտի լինէր ու գուցէ այդպա-
նելի: Երկրորդ.— Կայ դասակարգ մը որ
դպրոցի ընթացք եւ բարձրագոյն դասըն-
թացք լրացնողներն են, ու ասոնք՝ ամէն բան

լրացնողի ու գիտցողի մը պէս, մեծ յաւակնոտութիւնով ալ լիացած՝ կարծես սոսկալի հակաստիորդը կը դառնան միւլանին ու գրչին, թղթին ու գրքին, ու կրնանք ըսել թէ մեր կղերին շատն ալ, երբ անհրաժեշտ զարդացումը չունի, ունենալ չերազեր իսկ, եւ քիչ շատ ուսում տանողն ալ հոն դամուկը մնացեր է։ Բայցառութիւնը դիտում թէ չի կրնար ամէնս գոհացնել Մէկը պէտք էր դոյլն առած զէպի աղբիւրը վազէր, միւսը պէտք է իբրեւ ջուր հոսէր, եւ ոչ թէ լծացած մնար եւ օր մը նոյն ինքն իր ծարաւը յագեցնելու կարողութիւն իսկ չունենար։ Երբ երկու խմբակն ալ առենին ու ժամանակին պէտքին առջեւ կեցած գործին, անաւտիկ սպասող ու ծարաւող հօսն ալ պիտի կրնայ իր պասուքն անցնել։ Կարգուկ ու պաղուկ գրովը։

Ի դուր՝ Տաճարի Արժանաշնորհ խմբագիրը հիօթ ճգնութիւնով ու տքնութիւնով եկեղեցականութեան պատիւ բերող այս կարեւոր աշխատութիւնը յառաջ կը տանի, տանելով նաեւ սիրայօժար կարգ մը նեղութիւններ, որոնք իր նիւթական համեմատ կարողութենէն շատ վեր են։ Յաւալի է որ մեր մէջէն չգտնուեցաւ բարեւէր մը որ գոնէ նիւթականով մը օգնէր, թէն։ ան հաստատ ուխտած կ'երեւի թէ՛ ամէն զժողովութիւններու կուրծք տալ պէտք է, զուցէ Տաճարովը մաս մը բերէր պատուի ու արժանիքի՝ մեր արդի Հայ ու Հայր կղերականութեան։ Եւ եթէ չգտնուեցաւ բարեւէր մը, գոնէ շատերը բաժանորդագրուէին ու հաճութիւնը ունենային՝ բաժանորդագրութեան եղող չնչին գումարը հասցնելու, որ 40 դահեկանը չանցնիր, մինչդեռ շատ անգամ այդ ալ չի փութացուիր որ խմբագրութիւնը կը ստիպուի ծանուցանել թէ յղեցէք, փութացցէք։ Գոնէ վճարումովը պարզ ու պարտական քաջալիրա՞նք մըն ալ չարժիր։

Յաւալի է ըսել թէ կղերին շառը չի կարճար եւ իր ժողովուրդին յառաջդիմութեանը, զարգացմանը կը զլանայ 40 դահեկանը, ու սա մեծ զրկանք մը չէ՞, զի հովուի մը զարգացումը, յառաջդիմութիւնը, պաշտօնին գիտակցութիւնը, պարտաճա-

նաչութիւնը, համեստ կենցաղը, պարկեշտ վարքը, սրբասուն բարքը, այս ամենը ի սպաս հօտին են, ի ծառայութիւն ժողովրդեան են, ու ազդեցութիւնը որչա՛փ չինիչ, այնչա՛փ տարուորիչ են։ Եւ պիտի կրնա՞նք բաղդատութեան դնել այն անձնդիր եւ անձնուէր հովիւներուն հետ, ըլլան երէց թէ բարձրաստիճան, անոնց՝ որոնք արեւինն ու օրերինն, արիւնինն ու կեանքերինն միշտ տուած են իրենց սրբի ժողովրդեան համար, եւ նայնչափ սիրայօժար կամաւորապէս բաղում զրկանքներու ու ամանջանքներու տոկացիներ են։

Ու հիմակ մեր կղերը այդչափ անպարտաճանա՞չ պիտի տեսնենք. չե՛նք հաւատար մենք, բայց իրենք ալ պէտք է մեր մէջը այդ հաւատքը չծնցնեն։ Իբրեւ արժանաւոր հովիւ ու կղեր չպիտի կրնան արդարանալ, երբ մատի ծայրով իսկ չեն հսկի օգտակար լիերթերուն ու գրքերուն, ու անոնցմէ քաղուած անունգով երբ չեն սնուցաներ իրենց հօտը բանաւոր։

Գիտենք որ պիտի առարկին թէ շատ անգամ չոր հաց մը իսկ չենք կրնար դրտնել. եւ զուցէ ասանկներ ալ գտնուին։ Բայց այս խօսքերով արդարանալ չէ՛ կարելի, մեր կղերը թո՛ղ աստիճանական եւ օրոստօրէական զարգացման միտի, այդ փափաքը ու տենչը թող զինքը լափէ, միջոցներ շատ շուտ պիտի ստեղծուին, ինչպէս որ կը ստեղծեն ու կը ստեղծուին ծխախոտին, օղիին ու գինիին զրամները ու տակուին։ . . շատ աւելին ալ շատ անգամ, ու ցաւալիօրէն։ Ս. Գիրքը մասնաւորապէս չարդիւհ՝ ամենուն ալ եւ առաւել անոնց որոնք Տէրօջը ծառայութեանը կը կոչուին։ Յովհաննէս Կարապետի համար չէ՛ր որ ըսուեցաւ՝ գինի չխմեց երբեք. ինչո՞ւ մերոնք ունենան այդ մոլութիւնը մինչեւ դայթակղութեան տանելու չափ. ալ ի՞նչպէս պիտի քարոզեն ժողովուրդին թէ մի՛ արբենաք, երբ իրենց չունչերը ասով կը բուրին. եւ երբ ունինք մենք անանկներ ալ որոնք տան ու դանտէր են եւ օրէ օր կ'աւելցնեն ու կրկին մեղք կը սեպն տաանոց մը տալու. դրքին ու թղթին, ու ակամայ տուած

ատեններն ալ կրկին քննեմք մը չեն յաճեր էջերու ու սողերու . այսպիսեաց թո՛ղ պ'տի ըսենք :

Ուղիղ եւ գանգատներուդ մէջ, Տէր Հայր, բայց բոլորովին յուսաբեկ մի՛ լինեմք . ունինք բայցառութիւններ , որոնք պիտի կրնան իրենց պարտաճանաչութիւնովը շատ պէտքեր ու պարտքեր լրացնել . խնդրենք որ մեր Երէջ Հայրերը արժանապատուութեան խորունկ զգայումով մը անգամ մըն ալ պոռթկան դուրս , հոսին ու յորդին , կրնն ու տանին ամէն բնու զոհողութիւն , ընդունին ամէն պատուական թելադրութիւն եւ մեղադրանք ու գանգատներ՝ որպէս զրդիչ , ունենան ամէն ջանք , չինայնն ո՛չ մի աշխատանք , որով բորձրանան , աղնուանան , պանծան ի վառս Ս. Եկեղեցիին եւ ի շինութիւն ու բարօրութիւն հաւատացեալ ժողովուրդեան :

Հայ կղերը գիտէ թէ իր դիրքը բարձր է , պաշտօնը վեհ է , եւ նուիրականութիւնը սուրբ է , եւ նոյն սրբութիւնով օժուած , ուխտին ու նուիրականութեան առջեւ պարտազանց եւ օրինազանց գտնուիլ խղճի , կոչումի , առջեւ պարտաւոր մնալ է եւ յաւիտեանս դատապարտելի : Ուրեմն դիտեալ պէտք է , օրէնքի եւ կանոնի հետեւեալ պարտ է . այն ատենն է որ շշուկ , դանդաղ , մեղադրանք պիտի դադրին , եւ պիտի դադրին այն դիտողութիւնները որոնք աւելի խոշոր ու շար շար կը տեսնուին ու աններելի կը զիտուին ու կը համարուին հովիւ ու հայր կոչուածներուն վրայ : Այն ատենն է որ պիտի դադրին լսուելէ թէ երէցները ու ամէն կղերականները դրամը մարդն են եւ ոչ թէ պաշտօնին , այն ատենն է որ վերջ պիտի գտնեն շատ անգամ խօսքեր որ այնչափ կը վարկարեկեն մեր կղերին պատիւը , որ պէտք է միշտ սրբութիւնով փառի , որուն ըզճացողն ենք : Այո՛ , վերջ պիտի գտնեն իրարու հանդէպ սեղի ունեցող անհամա կիր , ցուրտ ու անտարբեր վերաբերումներ . ա՛յո այն ատենն է որ Քահանայապետին քահանաները արժանաւոր յաջորդները ու ժառանգորդները պիտի լինին Մեծ Հովուապետին ու անմեղ Հովուին , որ իր

անձը վասն ոչխարաց առաւ ի փայտն խաչանիչ : Չենք կրնար մոռնալ ու ուրանալ , այո՛ , ունինք Երէցներ անձնդիր ու անձնուէր . ու մէկին յիշատակը դեռ շատ թարմ է երբ՝ ժողովուրդին համար խոզխոզուեցաւ մոլեգին կատաղածութիւններէ : Ունինք , այո՛ , որոնք զըջիւ ու բանիւ կը տքնին եւ բաժին կը բերեն իրենց ուխտէն ու պարտականութենէն : Սա ալ ընդունինք թէ ամէն բնու կղերին ուսին չի ծանրանար , եւ ամէն պարտականաւորութիւն լսկ անոր վրէն պարտք չեն , այլ ժողովուրդինն ալ , որուն ծոցէն է որ կը կանչուին նոյն պաշտօններուն , զիրքին եւ ուխտին : Այո՛ , ամէն հայ անհատ պէտք է կարգայ իր կրօնաթերթը՝ Տաճարը՝ որ միակ է , եւ կ'սպասենք որ Ս. Երուսաղէմ ալ իր Սիօնը չարունակէ , եւ հրամայէ պիտանին ու օգտակարը , եւ ոչ թէ դայթակալից չարունակական այն արարքները որ ա՛լ զղուելի դարձան , եւ աղտ մը ու ախտ մը ցուցադրեցին :

Տաճարը որ կրօնի ու Եկեղեցիի վրայ գրող , ճառող , մեկնող ու պատկերացնողն է , միշտ պիտի լինի ամենուս ալ սիրելի : Թո՛ղ կարգայ հայ անհատը , զի հոն միութարանք , սփոփանք պիտի գտնէ , իր եկեղեցիներուն վսեմութիւնը , չքնադութիւնը պիտի կարգայ , սրբազան արանց ու հարանց սքանչելի վարքն ու բարքը պիտի ուսանի , Ս. Աւետարանին կենաց Բանին գիտակ ու ժառանգ պիտի դառնայ : Այո՛ անով պահ մը իր ներկան ու ապագան քով քովի բերելով առաւելը պիտի ունենայ ու ատոր պիտի ըզճայ :

Հայ կղեր , կարգա՛ որ սորվեցնես : Հայ անհա՛տ , կարգա՛ որ օգտակարիս : Կղեր ու ժողովուրդ , չէ թէ Տաճարը քեզ պիտի գոհացնէ , այլ շատերու կը կարօտես , եւ շատերուն համար ալ ժամանակով եւ դրամով ժլատ մի՛ դանուիր , այլ շոտյլ , անոր տոկոսը շատ է եւ գանձումը ապահովեալ :

Տէր Հայր , աղօթէ ու մաղթէ որ Կենաց Բանին Հովիւները ըլլան այնպէս՝ ինչպէս իրենց Տէրը , եւ ժողովուրդն ալ այնպէս՝ ինչպէս այն ունկնդիրները որ աշակերտեցան :

ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ՀՈԳՆՈՐ ԿԵԱՆՔ

ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՏԱԿԸ

«Ասով իմ Հայրս փառաւոր-
ուեցաւ. որ դուք շատ ստուգ
բերէք, եւ իմ աշակերտս ը-
լաք :» Յովն. ԺԵ. 8

Յիսուս իր աշակերտներուն ճշմարտո-
թիւններ սորվեցնելու մէջ բնական կանոնի
մը հետեւելով, նախ պարզ եւ դիւրահաս-
կանապի ու յետոյ աւելի բարձր սկզբունք-
ներ ներկայացուց անոնց : Եւ երբ այս
խօսքերը կ'ըսէր, արդէն իր պաշտօնին
վերջերն էր հասեր, ու կը զգար թէ իրեն-
ները պիտի կարենային ըմբռնել այս կեն-
սական ու կարեւոր ճշմարտութիւնը : Եւ
արդէն աւելի հասկնալի ըլլալու համար,
որթատունկի մը օրինակն առած էր, ինք-
զինքն իրրեւ «Ճշմարիտ որթ» ներկայա-
ցնելով ու իրեններն ալ իրրեւ ճիւղեր,
որոնք պէտք է հաստատուած ըլլային իր
վրայ : Կոտանց ատոր կարելի չէր ճշմարիտ
պտղաբերութիւնը : Ինչ բնական ու պարզ
օրինակ մը : Շատ զիւրիւն է մեզմէ իւրա-
քանչիւրին համար հասկնալ թէ ո՞րչափ
կենսական է հաղորդակցութիւնը որթին
ու անոր ճիւղերուն միջեւ, թէ ճիւղը ո՞ր-
չափ կը կարօտի որթին : Ասոնց իրարու
հետ ունեցած հաղորդակցութիւնը անխը-
ղելի է . ու եթէ խզոււմ, անշատոււմ պա-
տահի՝ ճիւղերը չեն կրնար կեանքի կա-
նանջը պահել իրենց վրայ : Կը չորնան :

Երկնաւոր Վարդապետին այս խօսքե-
րուն մէջ հետեւեալ կարեւոր եւ ուշադրաւ
կէտերը կան, զորս կ'արժէ նկատողու-
թեան առնել :

Ա. Աշակերտութիւնը. — Առաջին աղ-
նարկով քիչ մը անբնական կ'երեւայ Յի-
սուսի իր աշակերտներուն ըսելը թէ իմ
աշակերտներս եղէք : Արդէն զանոնք ինք
ընտրած չէ՞ր. անոնք ալ ամէն ինչ ձգած՝
իրեն չէ՞ին հետեւած : Բայց քիչ մը խոր-
հելով կրնանք տեսնել թէ Յիսուս պաշտօ-
նապէս աշակերտուել աւելի հոգիով աշա-
կերտելու կարեւորութիւնը շեշտել կ'ու-
ղէր, ինչպէս որ շատ սրտէ է իր ընտրած
նմանութենէն ալ : Ուրիշ կէտ մը սա էր

թէ՝ Յիսուս իր աշակերտներուն տուած
այս երկնաւոր դասով՝ ապագայ բոլոր քը-
րիստոնեաներուն, համայն հաւատացեալ
խումբերուն ու ժողովուրդներուն կը խօ-
սէր : Հետեւեալ, միւրի, Քրիստոնեա-
ներու համար էր այդ դասը : Եւ երբ ան-
գամ մը դիտենք մեր շուրջը, ո՞րչափ
չհասկցուած, չգործադրուած պիտի գտնենք
այս ճշմարտութիւնը : Մեր եկեղեցիները
լեցնող հաւատացեալներու բազմութեան
մէջ արդեօք քանի՞ հատ կայ Քրիստոսի
ճշմարտապէս հետեւող : Տօմարներու եւ
պաշտօնական արձանագրութիւններու մէջ
Քրիստոնեայ, Քրիստոսի հետեւող նշա-
նակուածներուն մէջ քանի՞ հատ կայ իս-
կապէս Քրիստոսի հետեւող : Եւ արդէն
բուն իսկ հոս չէ՞ Քրիստոսի Եկեղեցիին
տկարութիւնը : Մարդիկ քրիստոնեայ ենք
կ'ըսեն, առանց իսկապէս ըլլալու, կ'ա-
շակերտին՝ առանց Երկնաւոր Վարդապե-
տին սորվեցուցած ճշմարտութիւնները ըմ-
բռնելու եւ ապրելու, եւ դեռ կը զարմա-
նանք թէ Քրիստոնէութիւնը իրմէ սպաս-
ուած արդիւնքը առաջ չի բերեր : Մեզմէ
շատերուն համար ալ յարմար պիտի չգա՞ր
սա խօսքը, «կա՛մ անունդ փոխէ կա՛մ
գործդ » Այո՛, կա՛մ պէտք է Քրիստոնեայ
անունը փոխենք, կամ մեր սարկած կեան-
քը : Այդ ընելով դոնէ անկեղծութիւնը
ունեցած կ'ըլլանք մեր իսկութիւնը մէջ-
տեղ դնելու :

Բ. Պշտութեան արժեքը. — Աշակերտու-
թեան իբր բնական հետեւութիւն, Յիսուս
Պաղարքութիւն, գործ կը պահանջէ իրեն
հաւատացողէ մը : Եւ հոս յայտնի պիտի
ըլլայ հաւատացեալին կենսական կապակ-
ցութիւնը՝ իր Փրկչին հետ : Ինչպէս որ
չորցած ճիւղ մը ծառի մը վրայ կապելով
չենք կրնար սպասել որ նոյն ծառին պը-
տուղէն գտնենք այդ կապուած ճիւղին
վրայ, այնպէս ալ շատ մը չորցած հոգի-
ներու, մարած կեանքերու Քրիստոնեայ
Եկեղեցիին մէջ գտնուելէն ճշմարիտ ար-
դիւնաբերութիւն, պտղաբերութիւն չենք
կրնար սպասել : Ծճմարտութիւն է նաեւ
թէ ամէն բարի ծառ բարի պտուղ կուտայ
եւ չար ծառ չար պտուղ կուտայ : Միթէ

քաղիցեն ի փշոյ խաղող եւ ի տատակէ թուղ,» կը հարցնէ Երկնաւոր Վարդապետը : Չար սիրահրու ակնաղբիւրէն կեանքի գետեր կը բղխին, չար հոգիներու աչքերէն սրբութեան կարօտներ կը բարձրանան : Հետեւաբար եթէ կեանքը փոխել կ'ուզենք՝ սիրտը փոխելու ենք, եթէ դորձը փոխել կ'ուզենք՝ այդ գործերը երկնոյ միտքը փոխելու ենք : Ստութեան հօր ծախուած մէկէ մը ճշմարտութեան գործ սպասել աւելորդ յոյնութիւն է : Ահա տխուր գաղտնիքը շատ մը անուանապէս աշակերտներու անպաղաքեութեան, չորցած կեանքերուն : Ուրեմն աշակերտիւր բաւական չէ, այլ պէտք է նաեւ հետեւիլ Փրկչին, եւ կեանքի փոխել Անոր գոհար խրատները : ապրիլ սիրոյ, ղթութեան, սրբութեան, բարութեան, անձնութեան կեանքը, պողպայից, յուսթի կեանքը : Եւ այն ատեն Բրիստանիայ Եկեղեցին պիտի նմանի մրգաշատ ծառերով զարդարուած մրգաստանի մը, իր պտուղներով մոռցանելու եւ զովացնելու համար տկար ու այրած հոգիները :

Գ. Ամենամեծ նպաստիր. — Հետեւաբար ինչ է նպատակը այս աշակերտութեան եւ պաղաքեութեան : Յիսուս կը յայտնէ զայն թէ Հօրը փառաւորութիւնն է : «Եւ տեսցեն զգործս ձեր բարին եւ փառաւորեսցին զՀայրն ձեր երկնաւոր :» Եւ այս՝ ինչ մեծ նպատակ մը, որուն սահմանուած է մարդս : Այո՛, թէ եւ Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ եւ երկնից հառտաառութիւնը անոր ձեռաց գործերը կը ցուցնէ, բայց Աստուծոյ անուան փառաւորութիւնը մեր միջոցով պիտի ըլլայ, ուրիշներ մեր կեանքերը տեսնելով պիտի փառաւորեն զայն : Բայց, Բրիստանիայ ընթերցող, պահ մը խորհինք, արգեօք մեղքի ու ինկածութեան այն ստորնութիւններէն, որոնց մէջ մեր պատճառով Աստուծոյ սուրբ անուան կը հայհոյուի, վեր կ'ա՛ծ ենք, բարձրացած ենք մինչեւ վերնագաւառները հոգեկան մեծութեան, ուր մեր կեանքը, մեր գործերը Երկնաւոր Հօր փառաւորութիւնն պատճառ կը զառնան : Եւ հոս ինչ տխուր եւ

զառն խոստովանութիւններ կան մեզի, ամենուս համար ընկիւք : Մենք այսպէս ըմբռնած ենք Բրիստանիական կեանքը, այսպէս կ'ապրինք զայն : Կեանքեր, կեանքեր, անմահ կեանքեր, յաւիտենական կործանումէ փրկուելով պիտի կրնա՞ք ձեր ամենամեծ նպատակին, Աստուծոյ փառաւորութեան ծառայել : Պիտի կըրնա՞ք ճշմարիտ աշակերտութեամբ զօրացած, առատ պողպաքեութեամբ բարդաւաճ ամենամեծ նպատակին նուիրուիլ : Երանիլ թէ :

ԳՐԻԳՈՐԻՍ

ՍԻՒՆԵԱՅ ԴՊՐՈՅԸ

Ա.

ՄԱԳՈՒՄՆ ՍԻՒՆԵԱՅ

Սիւնեայ աշխարհը Հայաստանի այն մասն է, որուն սահմանն է հիւսիսէն՝ Դուգարաց երկիրն եւ Ուտի, արեւմուտքէն՝ Արարատ ու Երասխ գետը, հարաւէն՝ դարձեալ Երասխ որ կը բաժնէ Սիւնեայ աշխարհը Վասպուրականէն ու Ատրպաւսականէն, իսկ արեւելքէն՝ Արցախու երկիրը : Ընդարձակ մասը կը զբաւեն բարձրաբերձ լեռներ, որոնց մէկ քանին անմատչելի ու անրեր. մնացեալները՝ մշտադաւար անտառներով զարդարուած՝ զիգեցիկ տեսարաններ կը պարզեն :

Բնական էր որ գրեթէ լեռնակոհակ այս երկիրն ամէն կողմէ ոռոգուէր լեռնաշղթայից ծործորներուն մէջ հաւաքուած ջուրերէն : Գետերն ալ զարհուրելի յորձանքներով զայրացած՝ ուրեք ուրեք ջրովէժներ կը ձեւայնեն եւ կը թափին Երասխ գետն ու Գեղամայ ծովը : Երկիրը բարեբեր է մեծ մասամբ, եւ հաւանաբար այս պատճառաւ ալազգիներն իրենց լեզուաւ յորջորջեցին Դարապաղ, որ կը նշանակէ սեւ ալյոս, իրը թէ այգիներու շատութենէն մթապնած, եւ երկիրն ամբողջ այգի մը :

Ազգային պատմիչներու համաձայն Ամասիայի անգրաւիկը՝ Գեղամ՝ իր Հարմա

որդին Արմաւիրի մէջ թողլով կ'երթայ բնակիլ զէպի արեւելեան հիւսիս, ծովակի մը եզրը, զոր իր անունով կը կոչէ Ծով Դեղաւայ եւ բնակութեան վայրերը՝ Դեղաւայնի։ Հոս կը ծնի իր «սէգ կորովաւն եւ զեղեցկազեղն» որդին՝ Սիսակ, որուն կուտայ Դեղամ իր սպաղաւաճքին մեծ մասը, եւ ժառանգութեանը համար սահման կը դնէ զէպի արեւելք, տարածուելով մինչեւ Երասխայ ավազանքը։ Սիսակայ սոյն աշխարհը կը կոչուի իր անունով Սիւնիք, «զոր Պարսք յատկապէս իսկ Սիսակաւ կոչեն» (Մովսէս Խորենացի, Ս. ԺԲ.)։

Եթէ իրօք Խորենացոյ աւանգած այս պարագան ստուգութիւն ունի իր ծագմանը մէջ, շատ աւելի յստակ ու բնական կը համարենք Սիսակին Սիսակաւ կոչումը քան Սիւնիք, եւ զայս հարկ չենք տեսներ ծառք բերաններէ անուր։ Սիսակ բառը յորջորջող միջոցինք բանաւոր է կարծել թէ կրնային նաեւ Սիսակայ, Սիսակեան, Սիսակաւ բառերը յղանալ ու յորջորջել։ Ըստ ամենայն հաւանականութեան, Սիւնիք աւելի ուշ ծագում ունի քան Սիսակաւ, եւ այն ալ նախ բնակիչներու անունն է եղած եւ յետոյ երկրին անցած։

Ի հնումն Դերմանացոց հզօր ցեղերէն մէկն էին Դոթացիները, որոնք Հնդկաստանէն դալով ժամանակ մը մնացին Պարսից Դերման նահանգը, յետոյ մեկնեցան եւրոպական աշխարհը՝ անցնելով Հայոց ու Կովկասեան ել կիրներէն։ Հաւանականորէն եթէ ոչ Դոթաց ազգն ամբողջովին խառնուեցաւ Սիսականի ժողովրդեան, զէթ երկար ատեն մնալով հոն, յարաբերութեանց մշակմամբ վարուց եւ բարաց շիտմանը ունեցան տեղացիներուն հետ, եւ իրենց խիստ նկարագրիւր փոխանցելին անոնց։ Այսու թերեւս տրդարանան Սիսականի ժողովրդեան համար Խորենացոյ մէջ բերած ածականները «զազանաւոր, վայրենապոյն, ճեղղարարոյ»։ Դոթացոց մէկ ցեղը կը կոչուէր Սիւիօն (Suiones), զոր Կարապետ Վրդ. Շահնաւարեան իրատմբ կը համարի մերիններէն


Սիւնի կոչեցեալ, եւ որ կը տարածուի բովանդակ երկրի բնակչաց վրայ, այդ ցեղն ամբողջովին կամ մասամբ հաստատուելով հոն, կամ ըստ ամենայնի իրենց ազգեցութիւնը թողլով։ Ըստ այսմ նախ ժողովուրդը Սիւնիք կոչուած, եւ ապա այս անունն անցած է երկրին բուն անունն՝ Սիսականի տեղ։

Ըսինք թէ Դոթացիներն ընդ երկար մնացին Սիսական աշխարհի մէջ եւ տեղացոց հետ շիտում ունեցան, երկու ժողովուրդներ իրարու մէջ ձուլուելու չափ։ Արդարեւ, զոք կամ կոք բոլոր շարայարեալ է Սիսականի աւաններու անուանց սկիզբը կամ վերջը։ Նախնի Դերմանները ստվորութիւն չունէին պարագափակ քաղաքներու մէջ բնակիլ, այլ նկուզներու, այրերու, խրճիթներու եւ տնտաններու մէջ, առկաին այդ տեսակ տեղանք բնակողներ կը գտնուին ինչպէս ի Խնձորիսկ Զաղձորոյ, ի Հարանդ եւ այլուր։ Դերմանացոց մէջ իւ ճիթներու խումբը կը կոչուէր Բակ=Pagus, զոր կը տեսնենք դարձեալ շարայարեալ Սիսականի բազում շէնքերու անուանց սկիզբը կամ վերջ, ինչպէս Բակաթոր, Բակերո, Նորաբակ, Սահակաբակ, Վարդանաբակ, Դպրաբակ եւ այլն։ Դերմանացոց պատկերազմի ու յաղթութեան չափաւածոյն անունն էր Odin=Օդին։ Սիւնեաց սահմանակից է աշխարհն Ուտի, ուր հաւանորէն կը գտնուէր նոյն չափաւածոյն նախկեալ մահնան։ Դարձեալ Դերմանները Thor=Թոր կը կոչէին սրտաման աստուածը, առկաին ցայտօր սրտառմանքու յաջորդող անձրեւը Թոր կը կոչուի Սիւնեցիներէն։ Մինչեւ ցարդ Սիսական աշխարհի բնիկներու վրայ կը տեսնուի նկարագրի այն կտրուր, որ Դերման ժողովուրդի բարացողականն է եղած միշտ, բնդանքապէս հիւրասիրութիւնն եւ ամուսնակցին սլջախահութիւնը Սիւնեցոյ մէջ առաւելութեամբ կը տեսնուի։ սիրող են անոնք արեւնուշա կտիւներու, վրէժինդութեան ոգին կը մտուցանեն իրենց մէջ, ինչպէս եւ թէ կրնան օժտուած են քոջաւորութեամբ։ Սիւնեաց այս բարոյականն

սրդիւնք էր անշուշտ Գերմաններու հետ եղած շփման։ Պատմութիւնը ցոյց կուտայ մեղք թէ ինչ էր Գերման ժողովուրդի նկարագիրը։ պատերազմասէր ազգ մ'էին անոնք, կռիւներէ մեծ հաճոյք կը զգային, միշտ անուցանելով այն հաւասարը, ըստ որում իրենց աստուածը՝ Օդին՝ իր օղային պալատան Վալհալլայի (Walhalla) մէջ կ'ընդունէր կոռոյ աստիճան քաջութեամբ ինկող զինուորը, եւ հոն ամբողջ օրը զիւ-ցալընք կ'ուտէին, կը խմէին եղին։

Այս անհերքելի ցուցմունքները զօրեղապէս կ'ապացուցանեն թէ Գերմանացիները, որոնք հետաւոր աշխարհէ կուգային Եւրոպա երթալու համար, մասամբ հաստատուեցան Սիսականի մէջ ու խառնուեցան բնիկ ժողովրդեան հետ, ստալով անոնց նոր բարք ու նկարագիր։ Այսու, սակայն, ըսել չենք ուզեր երբեք թէ Սիւնեցիները կրնան Գերման դադութի մը մնացորդն համարուիլ եւ օտար ծագում մը ունեցած ըլլալ։ ո՛չ, վասն զի Հայերն այդ կողմերը գոյութիւն ունեցած են ա՛յն օրէն, երբ գրաւելով Արարատեան աշխարհը, կ'ամ վանեցին չրջակայ ժողովուրդները, կ'ամ ինչպէս կը կարծեն հնախօսները՝ ջանացին զանոնք ընկղուղել իրենց մէջ։ Բայց թէ սառույապէս ո՞ւրեք անգամ Սիւնեցիները, եւ ո՞ւրեք կ'ամ նոր ծագում առաւ երկրին Սիսական յորջորջումը, անհնար է ճշգրտապէս հաստատել, առ ի չգոյն ստոյգ ու վաւերական աղբիւրներու։ եւ եթէ ազգային շփութեամբութիւնը չի կրնար զոհացում տալ քննադատ մտքերու, այս վերջինները կըրնան ամէն ինչ վերադրել անուանողի (eponyme) զիւցաղնի մը(1)։

ԳՆԷԼ Ծ. Վ. ԳՍԼԷՄՔԵԱՐԵԱՆ
Դասըգիւղ



(1) Eponyme կը կոչուին այն կարծեցեալ անձնաւորութիւնները, որոնց անունով կը յորջորջուին ժողովուրդները։

ԿՐՕՆՔ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Կ'երգուընցնեմ անձնաւոր հայր ընտանիսաց, պատրաստել սերունդ մը որ ճանչնայ Աւետարանը, կշռադատէ այս մեծ եւ վսեմ Դիրքին ուսուցած մեծ ճշմարտութիւնները եւ զանոնք լեցնէ իր տղոց զիտուն մէջ։

Վօրդեր

Պատանեկութեան էական, առաջին գիտելիքը կրօնքն է, բարոյականի միակ խարիսխը։

Տիսրօ

Հաւատացեալներ հասցուցէ՛ք մեզի, ոչ թէ պատճառաբանողներ։ Նաթօրիոն

Ոչ մէկ ազգ երբէք իր գոյութիւնը չպահեց, որուն՝ կրօնքը իրրեւ խարիսխ ծառայած չըլլար։

Ռուսօ

Կրթութեան յաւելումը բնաւ բարոյականութեան յաւելում առաջ չի բերեր. կրթութիւնը չէ որ կը բարոյացնէ, այլ կրօնական դաստիարակութիւնը։ Պէտք է որ Բրիտանիոն իր հանրային կրթութեան խարիսխն ըլլայ, հանրային դպրոցը սրբարան մըն է ուրիշ կրօնքը չի կրնար վտարուիլ։

Վիկտոր Բուզիկ

Պէտք է որ նախնական կրթութիւնը խորապէս կրօնային ըլլայ, որպէս զի արդարեւ լաւ ըլլայ։

Կիգօ

Լաւ եւս է տգիտութիւնը քան թէ յոռի կրթութիւնը. ուրեմն անկեղծօրէն եւ նոյն իսկ ջերմապէս կը փափաքեմ կրօնային ուսուցման։

Հիւլիօ

Աստուծոյ անգիտութիւնը պիտութեան մը մեծագոյն չարիքն է։ Խախտել կրօնքը, ընկերութեան հիմը քանդել է։

Պլաստոն

Կրօնային սկզբունքներն հազար անգամ աւելի կարեւոր են ազգերու, քան քաղաքային օրինադրութիւնն ու քաղաքական հաստատութիւնները։

Վ. Բուզիկ

Աւասիկ ոսկեղէնիկ եւ հեղինակաւոր խօսքեր որոնցմէ մեր կրթական պաշտօնեաները կրնան օգտուիլ անհաւատ պատանեկութիւն մը չպատրաստելու համար։

Խ. Յ. Ս.

Ը Ս Ի Ր . . .

— — —

Բարեկամիս Գ. ին



սի՛ր, Թախծոտ հոգիս յուզուած է
խորէն.

Կարգա՛ւ, ըսի, Սուրբ Գիրքը միշտ, ու նորէն
Դու, չե՛ս խօսիր, չե՛ս երգեր:

Ըսի՛ր, տխուր էութիւնս չապրիր ալ.
Մնացի մէջդ կենաց նշույն, ու դարձեալ

Դու, չե՛ս խօսիր, չե՛ս երգեր:

Ըսի՛ր, միտքս կը տանջուի խառնէն,

Գոհացուցի ես զայն իսկոյն, ու նորէն

Դու, չե՛ս խօսիր, չե՛ս երգեր:

Ըսի՛ր, խիղճս քարացած է չարժեր ալ.

Սուրբ խօսքերով կակղացուցի, ու դարձեալ

Դու, չե՛ս խօսիր, չե՛ս երգեր:

Ըսի՛ր, սիրտս վերադարձուած է վիշտէն.

Բաւասաններ ցոյց տուի քեզ, ու նորէն

Դու, չե՛ս խօսիր, չե՛ս երգեր:

Ըսի՛ր, յոյսերքս ծիրած են անայլալ.

Հաւատքի յոյս ներշնչեցի, ու դարձեալ

Դու, չե՛ս խօսիր, չե՛ս երգեր:

Ըսի՛ր, գրգռոտ երազներս ցնդած են.

Համոզեցի Թէ պատրանք է, ու նորէն

Դու, չե՛ս խօսիր, չե՛ս երգեր:

Ըսի՛ր, վախճամ Թէ կը մեռնիմ մօտ օրէն.

Զօրացուցի, Թափ տուի քեզ, ու նորէն

Դու, չե՛ս խօսիր, չե՛ս երգեր:

Քու յուսահատ, տխուր, Թախծոտ ժամերուն,

Սրբունքն աքքիդ, աղօթէ դուն հաւատքով,

Յիշատակներդ, յոյս, հաւատքդ պահէ՛ դուն.

Այն ատեն պիտ' խօսիս, երգես անխռով:

ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԳԱԼԵՄԵԱՆ

Բաղէ՛՛



ԲԵՆԷԼԱԳՐԻՉ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻՔԻՆ ԿԱՐԳԱՆ ՍՈՐՎԵՅԱՆ

— Պիտի վաժարէի որ վաղը մ'ը տունը
այցելէիք, ձեզի մասնաւոր ըսելիք ունիմ:

Յաջորդ օրը այցելու ուսուցչուհին ներ-
կայացաւ Տիկին Ռեբեկայի տունը, մեծ
ու հանգստաւէտ տուն մը, ուր ոչ միայն
մայրը եւ անոր երեք մեծցած զաւակները
կը բնակէին, այլ նաեւ քանի մը վարձա-

կայներ: Տունին մէջ ամէն բան կարգ ու
կանոն կը ցուցնէր, եւ այդ ապացոյց մըն
էր Տիկին Ռեբեկայի արպար տանտէրնու-
թեան:

Տիկինը դռնէն դիմաւորեց ուսուցչուհին,
ու տարաւ զայն հիւրասենեակը, ուր պիտի
խօսէր անոր՝ իր սիրտին վրայ այդչափ
ժամանակէ ի վեր ծանրացող զաւակիքը:
Ուսուցչուհին թէեւ չէր կր-
նար կանխազուշակել ըսուելիքը. բայց կը
կարծէր թէ բաւական լուրջ բան մը ըլլա-
լու էր: Եւ իրաւ ալ, Տիկին Ռեբեկա քանի
մը ահաբաւ համարձակութիւնը կորսնցուց
իր պատմութիւնը շարունակելու համար,
եւ պէտք ունեցաւ ուսուցչուհին քաջա-
լիրանքին. որովհետեւ շատ կ'ամչնար ըրած
խոստովանութիւնէն:

Պատմութիւնը համառօտաբար սա վր:
Տիկինը հեռաւոր գիւղ տեղ մը ծնած էր,
ուր շատ խեղճ ու կրակ դպրոց մը կ'ար,
եւ կանուխէն ալ խօսելու պիտեղութիւն
ունեցած էր. այնպէս որ անոր անհոգ եւ
տգէտ ծնողքը զայն ուսանելու անընդո-
նակ եւ «համար» նկատած էին: Անգամ մը
փորձի համար դպրոց զրկուած էր, բայց
այնպիսի անհամակրելի ուսուցչուհի մը
հանդիպած էր որ, ինք ալ այդ վախին մէջ
համոզուած էր, եւ այդպէս՝ առանց դռնէ
դրել կարգաւ մը սորվելու մածցած: Ինքը
շատ զեղանի ըլլալով, իր զեղեցկութիւնն
շնորհիւ ընկերութեան բարձր դասակար-
գին հետ շփումի մտած էր իր փոխադր-
ւած նոր քաղաքին մէջ, բայց միշտ ծած-
կած էր իր անուս ըլլալը: Յետոյ զփրախտ
ամուսնութիւն մը աւելի վնասեցուցած
էր զինքը. ունեցած երեք զաւակները
վատն ու կարող ձեռքերու տակ թէեւ
կրցած էր յարմարապէս կրթել, բայց ինք
այդպէս բոլորովին անուս մնացած էր:
Վերջին ատենները իր կրօնական պարտա-
կանութիւններուն վրայ ալ արթնցած էր,
բայց զփրախտաբար իր աչքան սիրած Ս.
Դիրքը ինք անձամբ չէր կրնար կարգաւ:
Վերջապէս իր ընտանիքը համարձակութեան
կոչում ընկելով իր սիրտը բացած էր այն
ուսուցչուհիին:

— Բայց ի՞նչ կայ, զո՞ք կարգաւ կր-

նաք սորվիլ, քուս ուսուցչուհին յուսա-
ղրիչ եղանակով մը :

— Ո՛հ, չեմ կրնար, պատասխանեց
սիկինը յուսահետօրէն — Ես գրեթէ ան-
բանի մը պէս եմ. երբ պզտիկ աղջիկ մըն
էի ու մեր պիւղին մէջ ձիերու եւ կովե-
րու կը նայէի, կ'ըսէի. — Խեղճեր, դուք ալ
ինծի պէս էք, չէք կրնար բան մը սորվիլ:

Եւ արցունքի խոշոր կաթիլներ ինկան
սիկինին ալուերն ի վար:

Բայց ուսուցչուհին պնդեց իր ըսածին
վրայ, եւ խոսադաս միշտ երթալ ու ա-
նոր ընթերցումի դասեր տալ:

— Բայց իմ զաւակներու քով, որ չեն
գիտեր այս գաղտնիքս, ո՛րչափ ամօթահար
պիտի մնամ, այս տարիքիս այսպէս փորձ
մը ընելով:

— Զաւակներդ բան մը թող չլսեն
մինչեւ որ կտրուի սորվիք: Այն ատեն
անակնկալ հաճոյք մը պատճառած պիտի
ըլլաք անոնց: Արդէն անոնք ցորեկին աւեր
չեն գանուիր, չէ՞:

Կարգադրութեանը ըրին եւ Տիկին Ռե-
բեկա, հակառակ իր յուսահատութեան,
չատ աղէկ սորվեցաւ կարգալ, այնպէս որ
քանի մը ամսուան մէջ իր Աւետարանը
կրնար կարդալ, եւ մեծագէտ երջանիկ էր:

— Երեւակայե՛լ թէ ես ալ այս տարի-
քիս մէջ կարգալ պիտի սորվէի, Օր. Սա-
թինիկ, բացադանչեց Տիկին Ռեբեկա,
երբ օր մը ուսուցչուհին իրեն այցելեց,
այո՛, դուք ինծի այնպիսի բան մը ըրիք
զոր մայրս իսկ ըրած չէր:

տալիս կը խոսէր:

ՀԱՅ. Ս. ԵԿԵՂԵՏԻՈՅ զաւանուութիւնն
ընդունած են, վերջին մէկ քանի ամիսնե-
րու միջոցին, Ասորի Սառա Յարութիւն-
եան, աւստրիականացի յայն կին մը՝ Բրիտ-
տին Տովիտովիչ, Լատինադասան Ալֆրէտ
Լուիսի, Հայ-հռոմէական Կարապետ Ճի-
վէլէկեան, կինը եւ հոգեդասակը, նոյնպէս
Հայ-հռոմէական Թադուհի Մեօիսեան:

ԱՅՐԻԱՅՆԱՄ յանձնաժողովը որոշած
է իր անդամներէն մին կրիլիկա զրկել, իր
բայած արհեստանոցներու մասին մօտէն
քննութիւն կատարելու համար:

ՀՈԳԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆԸ

ՀՈԳԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԻԹԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

ԴԷՄ ԴԻՄԱՅ (1)

Դ.

Բարդաւտական քննութիւն «Ես» եւ «Իմ» ստո-
րագիրքներուն. — Բարդաւտական յաղթանակը
Նիւթականին վրայ. — Ի՞նչ կրնանք յուսալ —
Ի՞նչ պիտի ըլլայ մեր վախճանը:

Ա. Տեսնենք հիմա գիտակցութեան ուղ-
ղակը վիայութիւնը:

Երկու եղանակ կայ զայն մէջ բերելու
Յաճախ կոչում կ'ընեն ողջամիտ պարզ
կարծիքին: Ըստ Ա. Կարնիէրի, օրինակի
համար, տղէտը, նոյն իսկ մանուկը իրենց
բարոյական անձնաւորութիւնը՝ տնջատ
կ'ըմբռնեն նիւթական տնջատակաճութե-
ան: Երբ հարցափորձենք շինական մը
կամ մանուկ մը, առանց վարանելու պի-
տի պատասխանէ թէ իրենց բարոյական
անձին մէջ չեն զգար կրճատում մը, իրենց
մարմինն կրճատումներուն հետեւանքով,
եւ թէ երբ դուարթ զգացում մը ունենան,
հետամուտ չեն ըլլար զայն փոխադրելու
իրենց գործարանաւորութեան ո եւ է մա-
սին մէջ:

— Ի՞նչ է հոգին, կը հարցնէր մանուկ
մը իր մօրը:

Եւ երբ մայրը պատասխան մը կը
փնտռէր տալու.

— Դատյ, յարեց մանուկը, հոգին այն
է որով ես քեզ կը սիրեմ:

Երբ կը նեղուինք անօթութենէ,
երբ վիշտ կը զգանք կոչաւ կամ դառն
խօսքէ մը, առաջին պարագային՝ ցաւը
նիւթական է. իսկ երկրորդ պարագային՝
արդարեւ անիկա ուրիշ բան է, ուրիշ
բնական պատճառէ մը յառաջ եկած է, եւ
ճիշդ ա՛ն է ինչ որ կ'անուանենք մեր բա-
րոյական անձեր: Ապա ուրեմն մինք մեր
մէջ կը զգանք երկու որոշ էակներ:

Որպէս զի այս փորձը իմաստաւորա-
կան արմէք մը ունենայ, պէտք է երթալ

(1) Շար. 30րդ Թիւն:

մինչև Տէքարդի փաստին, եւ ըսել իրեն հետ թէ «կրնանք կասկածիլ մարմինն դուրս թնկն, կասկածիլ ամէն բանէ որ զգայարանքներու տակ կ'իյնայ, սակայն անկարելի է ինծի կասկածիլ իմ մտքէս, իմ գոյութիւնէս, որպէս գիտակից երթակայ, որ այնքան յստակ կ'երեւի ինծի որ շատ ճիգ կ'ընեմ զայն ժխտելու համար կը կասկածիմ, ուրիմն կամ Սւեյի ճիշդ է ճանչնալ հոգին քան մարմինը»:

Բ. Եւր իսկապէս մի է, միութիւնը անոր հիմնական ստորոգելին է, վասն զի, առանց միութեան չկայ գիտակցութիւն եւ հետեւաբար չկայ միտք, ո՛չ զգայնութիւն եւ ո՛չ կամք: Արդ, ամէն նիւթ տալածական է, ուրիմն քաւանքի է, ուրիմն բաղկացած է շատ մը մասերէ: Եթէ ըստ թէ միութիւնը յառաջ կուգայ նիւթական մասնիկներու պարզ դասաւորութիւնէն, պէտք կ'ըլլայ այն ստին բացատրել այդ խմբաւորումն իսկ, այս ներդաշնակութիւնը, նիւթական մասնիկներու այս իմաստուն հիւսուածքը՝ կազմելու համար այս հրաշալիներուն հրաշալին, միտքը: Այսպէս, կ'ըսէ Ռաֆէսոն, կարելի չէ բացատրել հոգեբանական կեանքը նիւթին միջոցաւ, զայն կրնանք ընել միայն այն պայմանաւ որ նախապէս փոխ սորուին նիւթին՝ հոգիին միեւնոյն յատկանիշները՝ նիւթականացնելու համար հոգին, մարդ ոտիպուած է նախապէս հոգեկանացնել նիւթը:

Եւր էականապէս միեւնոյնն է, այսինքն զարձեւալ մի, միշտ նոյն ինչին՝ իր տեւողութեան ընթացքը յաջորդական վայրկեաններուն մէջ. բայց կենդանի նիւթը կը նորոգուի ինչպէս բացատրելու է նիւթապաշտական վարկածով միեւնոյն կեանքի մը միութիւնը, եթէ ճշմարիտ է որ 5 տարեկէն մինչև 60 տարի՝ մեր մարմինն նիւթը բազմաթիւ անդամներ կը նորոգուի ամբողջութեամբ: Եթէ ըսենք թէ, հիւլէներուն մեկնելուն չափով՝ շնչառութեան եւ անդադարութեան միջոցով եկածները կատարելապէս կը բռնեն առաջիններուն տեղը, եւ կ'ընդունին այն հիւլէները որոնք մնացած են հոն՝ միեւնոյն շարժումները

հաղորդելու համար, սակայն այս իսկ հարաշը մըն է զոր հարկ է բացատրել:

Ո՞րն է ուրեմն դասաւորող եւ ամէն ինչ կարգուսարքի բերող այս նախատարբը. — Ո՞րն է այն օրէնքը որ ներկայ է հոն, որպէս վարիչ գաղափար, բաշխելու համար հարկ եղած տեղերը անդադարութեան միջոցով եկած հիւլէները: Ան (նախատարբը կամ օրէնքը) ո՛չ թէ կը գործածէ զանոնք վերակազմելու եւ վերաշինելու համար գործարանները, այլ զանոնք կը ստնի հլուսաբար իրենց տեղը եւ անոնց կը սորվեցնէ իրենց գործը. ապա ուրեմն ան կ'իշխէ անոնց՝ այս նիւթական մասնիկներուն վրայ՝ այն բոլոր հեռաւորութեամբ որ կը դառնէ հոգին նիւթէն:

Ամէն ինչ կը յանդի արգարեւ սա բանին. նիւթը էականապէս անգործ է, անկարող է ինքն իրեն տալ իր չունեցած շարժումը, փոխելու իր ստացած բանին ուղղութիւնը կամ չափը: Եւր ընդհակառակն ինքզինք կը ճանչնայ որպէս մի ինքնատուրութիւն, որպէս մի ուժ որ կը ձգտի վախճաններու, որ կրնայ փոխել այս վախճանները, կրնայ ընտրել մին կամ մյուսը, զիմեղ դէպի անոնց՝ տառել կամ նուազ ուժգին շարժումով մը, մէկ խօսքով, ինքզինք կը ճանչնայ մի ստեղծիչ ուժ: Եւր, ուրեմն, նիւթական ուժերու արգասիքներէն բոլորովին աւրբեր բան մըն է, որով ո՛չ կախալ կրնայ ըլլալ եւ ո՛չ հսկատակ:

Կոյր ուժերու կոյտ մը ինչպէս պիտի կրնար արտայայտել ազատ անձ մը, առանց մեքենական ուրիշ հարկաւոր կապի մը:

Գ. Վերջապէս միշտ հոգեպաշտութեան ի նպաստ յառաջ բերուած կարգ մը իրողութիւններէ կը հանուի փաստերու երբորդ տեսակ մը: Առնք են այն բազմաթիւ պարագաները ուր կը տեսնուի որ բարոյական ուժը կը գործէ հրաշալիքներ, կը յաղթէ բնական ուժերու, կը հաղորդէ գործարանաւորութեան՝ բարերար կամ չարապէս ցնցումներ:

Միթէ, սոսկալի եւ յաճախ մահացու հիւանդութիւններն յառաջ եկած չէ՞ն բարոյական անակնկալ պատճառէ մը, գէշ

լուրէ մը. Այս հիւանդութիւններուն մէջ կայ արդարեւ մարմնական կազմաւորում, սակայն անոնց ակզնութիւնը որովհետեւ կը գտնուի մատուցած մը, դադարի մը մէջ, այսինքն կարելի եղածին չափ անպայման հոգեկան պատճառի մը մէջ. Երբեմն ալ հակառակն է որ անգի կ'ունենայ. դարձեալ բարոյական պատճառ մը՝ ապահովութիւն, յոյս, հրճուանք, կը բռնէ զործարանական մեծ խանգարումները:

Տեղին է նաեւ յիշեցնել թէ յաճախ կը տեսնուի որ նկարագրի (կամքի) ուժը կը յաղթէ մարմնական ցաւերու. առաջապահ քէ քայքայուած մարմնէ մը կը ստացուին այնպիսի ծառայութիւններ զորս աւելի զօրաւոր մարմիններ կը զլանան թոյլ ու մեղի հոգիներու:

Հոգիին՝ ոչ միայն իբր որոշ եւ զուգահեռական իրականութիւն, այլ իբր առաւելակիւ իրականութիւն՝ զոյութիւնը հաստատելու համար յառաջ բերուած այս բոլոր բանաւոր պատճառները մեզ կը թողարտին ձեռք անուն հիմա սա հարցը. — Ի՞նչ կրնանք յուսալ, ինչ է այն ճակատագիրը⁽¹⁾ որ մեզի կը սպասէ. Թէ

(1) Հանդուցելու ներքին Պատրիարք վարժապետան՝ իր Եկա Տէմիրճիպաշեանի գրած մէկ նամակին մէջ դառն շեշտերով կը ջանայ լուծել այս հարցը: Մտիկ ընենք իրեն. — Ինչո՞ւ երբ մարմինը կը ակարանայ, երբ ա՛լ չի ճաշակեր, ա՛լ չգրգռուր, յայնժամ միտքը, խնայականութիւնը կամ հոգին կ'ազնուանայ, կը բարձրանայ, կը լայնանայ, կը ստուարանայ: Կարծես Թէ հասուն պտուղ մը իր կեղեւը պտտելով զուրա ելլել կը նկրտի. հողապատանը նեղ կը գտնէ. Եւ անսահման ոլորտ կը փնտռէ, զաշխարհ նեղ կը գտնէ: Եւ բազում սիրելեաց սնարից վրայէն լսած եմ զտոնք:

Ինչո՞ւ մարդ զոն չէ իր վիճակէն, բազմալի վիճակն համեմէլ յետոյ ալ բազմաբնակը կը բազմապահէ, եւ այսպէս յանձնուի կը բազմայ, կը խորսի, կ'ուզէ ունենալ բան մը զոր չկրնար ունենալ հոս, ի՞նչ է այս:

Արդեօք ոչնչանան համար եւ այս անդուլ անդադար ջանքերն փայլի կատարելութիւն, զեպի յառաջդիմութիւն, զեպի լաւագոյն կեանք. ի՞նչ... Արդեօք ուրիշ աշխարհի համար պահուած չէ՞ մարդկային ազգին ամէն զարբու մէջ այս ընդհանուր բազմաբնակ, որով կ'ուզէ լաւագոյն վիճակի ախրախալ: Արդեօք տո՞ր հաւար հիւները գերեզմաններու եւ անդր բան զգերեզման կը փնտռենք:

Մենք ի՞նչ ենք, զայն մեզ կը սորվեցնէ հոգեբանութիւնը. ի՞նչ որ նպատինք ըլլալ եւ ի՞նչ որ պարտինք ընել՝ զայն ալ կը սորվեցնէ բարոյագիտութիւնը. սակայն ի՞նչ կրնանք յուսալ, ահա բնազանցական հարց մը, որ միւս բոլոր հարցերէն աւելի հետաքրքրած է մարդկութիւնը եւ զրա՞ ղեցուցած իմաստասէրները: Այն փաստերէն զոնք որոնց վրայ կարծած են մարդիկ թէ պիտի կրնան հաստատուի ապագայ կեանքի մը յոյսը, մենք ցոյց պիտի տանք կարգաւ անոնք ալ որոնք ա՛լ տակի համոզիչ արժէք ունին:

Առնենք նախ տրամաբանական եւ բնազանցական ապացոյցները:

Երեք ահաւի ապացոյցներ մէջ բերուած են ի նպաստ անմահութեան, այսինքն ի նպաստ յարատեւութեան մեր գիտակից կեանքին՝ մահունէ վերջոյ. — Առաջին տեղը կը բռնեն արամաբանական եւ բնազանցական ապացոյցները: Անոնք թէ եւ զօրաւորագոյններն են, սակայն ամենալազթիւնը չեն:

Հոգին մի եւ պարզ է. հետեւաբար անբաժանելի, ուրեմն չի կրնար ան կորսուիլ տարբազարութեամբ, ապա ուրեմն անեղծական է. Արդարեւ մահը ուրիշ բան չէ եթէ ոչ շուժում մը, անջատում մը՝ զանազան տարբերութեամբ բազմաբնակ մը: Արդ, պարզը չի լուծուիր, չի միանիր:

Երկրորդ՝ ամէն էակ անջնջելի է, երբ զայն նկատենք իր պարզ տարբերութեան մէջ, ոչինչ կը կորսուի: Չենք կրնար երեւակայել տարբարանական հիւլէի մը անկացումը: Երբ մարմին մը կը լուծուի, պարզ ձեւափոխութիւն մը անգի ունեցած է եւ ոչ ճշգրիտ ջնջում մը: Տարբարանական մասնիկները կը մանեն նոր բազակցութիւններու մէջ, ուրեմն անոնք բնաւ կորսուած չեն: Երբեք ահաւում չէ որ անոնք անկացման մէջ մանեն, եւ կարելի չէ երեւակայել թէ անոնք կրնան անէանալ էակը:

Մէջ մեռելներու քով վառուած կանձեղ մը կը զնէին: Արդեօք եւ մենք այս յուսոյն համար ճրագոր եւ լուսաւոր եւլին, կ'առաջնորդենք ի գերեզման, այս լոյսը փնտռելու համար, զոր չենք գտնիր ի վերջոյ:

իրապէս անկորնչելի է : Արդ , եթէ կարելի չէ ընդունիլ աւագի հատիկի մը անհետացումը , ինչպէս հաւատալու է ուրեմն խորհող նախատարրին մահուան :

Ինչ որ այս փաստին անբաւականութիւնը կը պատճառէ , առիկա նոյն իսկ անոր ցոյց տաւած ուժգնութիւնն է , նիւթի մը մէջ որ այս երկրաշտիական ապացուցումները չի պարունակեր : Անջնջափառութիւնը զոր նա պիտի ապացուցանէր , սոռզիւ մեր փախաքտծը չէ : Այս , մեր մարմնին տարրերն իսկ անկորնչելի են եւ , այս կամ այն ձեւին տակ , անոնք պարտին կալ մնալ եւ շարունակել իրերուն ընթացքը : Սակայն ի զո՛ւր զիտուններու բազմութիւն մը մեղ կը հրաւիրէ զո՛հանլ այս կերպիւ իւր շնթական անմահութենէ , ի զո՛ւր նաեւ մեղ կը խոստանան առաւել կամ նուազ յարեւմտն բնականցական անմահութիւն մը , մենք կը ցանկանք քուռն անմահութեան , զիտակից անձին անմահութեան : Սակայն այս անմահութիւնը չի կրնար ապացուցուիլ հաւաքաբանութեամբ մը : Եթէ եւր պարզ եւ անջնջական է , առիկա չէ այն միւսնոյն եղանակաւ ինչպէս է թթուածնի հիւլէ մը : Յոյս մը , բարոյական բողձանք մը պարտի հաստատուած բլլալ ամէն բանէ առաջ բարոյական պատճառներու վրայ : Թրգմ. Ֆրանս. Դ.Ր. ԷՕԼՄԷՉԵԱՆ (Մնացեալը յաջորդով)

ԿԻԼԻԿԻՈՅ Ս. Կաթողիկոսը , Եօզիատէն Ատանա դառնալուն առթիւ Գրչէնի ալիքեղած բլլալով , Վիճակին (Անկիւրիա) առաջնորդ Տ. Բարդէն Եպո. եւս նոյն թիւ մը երթալով , ողջունած է Ն. Ս. Օծութիւնը , որուն շքեղ ընդունելութիւն մը եղած է նոյն քաղաքին մէջ , եւ որ երկու երեք օր այնտեղ մնալէ , եւ իր պերճախօս քարձղներով ժողովուրդն հոգեւորապէս մխիթարելէ ետքը մեկնած է զԵպի Նիկատէ : Ս. Կաթողիկոսին կը հետեւին Սոյ միաբաններէն Տ. Գիւա. Ծ. Վ. եւ Տ. Եփ. րեմ Վ. Առիւտան Ն. Ս. Օծութիւնը Գծեալի Պօր դաւաճակն ալ ալիքեղով տիրալիք ընդունելութիւն դաւած է ժողովուրդէն :

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ(1)

Ե.

— Մենք , քրիստոնեաներս , աւելցուց Պամփիլիոս , երբէք չենք թերանար զեզարուեստի եւ զիտութեան ճաշակը մեր նւ մեր զաւակներուն մէջ զարգացնելու պարտականութեան մէջ : Կը կարգանք եւ կ'ուսումնասիրենք մեզմէ աւելի իմաստուն եւ գիտնական մեր նախնիքներուն թողած գրութիւնները : Երաժշտութեան , նկարչութեան կը հետեւինք , եւ մեր երգերն ու նկարները կը մխիթարեն զմեզ՝ տրտութեան օրերուն մէջ : Ահա՛ այդ պատճառով է որ մենք չենք կրնար գնահատել այն եղանակը , որով զուք՝ հեթանոսներդ՝ կը դործածէք արուեստներն եւ զիտութիւնները :

«Ձեր գիտնականներն իրենց ստղանդն եւ իրենց ստացած ծանոթութիւնները կը դործածեն՝ ուրիշներու վնասելու համար նոր միթոսներ վնասելու , շարունակ կը զբաղին պատերազմն աւելի վտանգաւոր , աւելի մահացու դարձնելու , ուրիշ բառով կը քաջալերեն մարդասպանութիւնը : Անոնք նոր գրութիւններ կը վնասեն զրա՛մ չահելու , հարստացնելու մարդոց դասակարգ մը՝ ի վնաս ուրիշ դասակարգի մը : Ձեր արուեստները կը ծառայեն շինելու եւ զարգարելու տաճարներ՝ ի պատիւ այն չատուածներուն , որոնց երկար ժամանակէ ի վեր զտրած են հաւատալէ : Ձեր միջէն ամենէն լուսաւորեալները : Բայց զուք կ'աշխատիք այդ հաւատքը պահպանելու ուրիշներու քով , յուսալով որ այդ խարէտութեան շորհիւ աւելի զիւրին պիտի ըլլայ ձեզի՝ տիրապետել անոնց վրայ , զերի ընկ զանոնք ձեզի : Արձաններ կը կանգնէք ձեր ամենէն անգութ եւ ամենէն հզօր բռնակալներուն , որոնք սարսափ միայն ազդած են : Ոճրապարտ սէրը կը ծափահարուի ձեր թատերաբե-

(1) Շար. Չորդ Թիւն սկսեալ :

մերուն վրայ : Երաժշտութիւնը ձեր մէջ
կը ծառայէ հաճելի կերպով զրգուելու զգա-
յարանքները մեծահարուստ որկրամոռնե-
րու , որոնք մինչեւ արեւածագ տեղ
խնճոյքներու մէջ ճոխ համադրմանով ,
մեղէններով եւ ըմպելիներով յղիացած
են : Ամենէն գեղեցիկ գործածութիւնը
զոր կ'ընէք նկարչութեան մէջ , պատկե-
րացնելն է այնպիսի լպիրշ տեսարաններ ,
զորս չպիտի հանգուրժէր դիտել ուրե-
մէկը որուն զգայարանքները բթացած
չեն անասնական կիրքերով , եւ կամ վա-
րազուրուած չեն գինիի գոլորչիներով :
Ո՛չ , այս նպատակով չէ որ մարդուն
տրուեցան այն ազնիւ ձիւքերը , որոնք
զինքը կը զատորոշեն անասուններէն : Այդ
ձիւքերը տրուեցան ոչ թէ զբօսանքի ,
ժամանցի համար , այլ կատարելու համար
Աստուծոյ կամբը , եւ մեղի օգնելու հա-
մար որ հաստատուի արդարութեան թա-
ղաւորութիւնը :

— Այո՛ , պատասխանեց Յուլիոս , այդ
բոլորը շատ վսեմ բան մը պիտի ըլլար ,
միայն թէ կեանքը կարելի ըլլար այդ
պայմաններուն մէջ : Բայց անհնար է այդ
կերպով ապրիլ : Ի՞նչ պէտք պատրանք-
ներու ենթարկուելու : Դուք կը մերժէք
մեր պաշտպանութիւնը , բայց եթէ հոս-
մէական լեզէոնները չըլլային , պիտի
կրնայի՞ք խաղաղութեամբ ապրիլ : Դուք
կը մերժէք մեր պաշտպանութիւնը եւ չէք
ճանչնար զայն , ինծի ըսիք նոյն իսկ թէ
ձեր համայնքին անդամներէն ոմանք ինք-
զինքնին կը պաշտպանին : Չէք ընդու-
նիր սեփականութեան իրաւունքի գոյու-
թիւնը , եւ սակայն կը վայելէք զայն : Ձեր
եղբայրները ստացուածքներ ունին եւ ձե-
զի կուտան , դուք ալ մեծ հագ կը տանիք
ձեր խաղողները առանց փոխարինութեան
չտալու , կը ծախէք զանոնք եւ դուք ալ
ձեր կարգին դնումիւր կ'ընէք : Արդ , այս
բոլորը խաբկանք մըն է պարզապէս : Եթէ
տառապէս գործադրէիք ինչ որ կը պատ-
ուիրէ Աւետարանը , այն ասան շատ լաւ
պիտի ըմբռնէի ձեր քննադատութիւնները
մեր ընկերային կազմակերպութեան վրայ :
Բայց այս պահուն ձեր կեանքը բացար-

ձակապէս կը հակասէ ձեր վարդապետու-
թիւններուն , եւ դուք կ'ուզէք որ ուրիշներն
ալ մասնակից ըլլան ձեր սխալին :

Յուլիոս այս խօսակցութեան միջոցին
սաստիկ ոգևորուած էր . ուստի միտմով
թուեց Բրիտանիական կրօնքին դէմ իր
ունեցած բոլոր քննադատութիւնները :
Պամիլիլիոս որ լսին կ'ունկընդդէր անոր ,
սապէս պատասխանեց վերջապէս .

— Ծառ կը սխալիս երբ կ'ըսես թէ
մենք կ'օգտուինք ձեր մեղի ընծայած
պաշտպանութիւնէն . ի՞նչ նշանակութիւն
ունին մեղի համար հոգմէական լեզէոն-
ները , մենք երբէք պէտք չենք ունենար
անոնց , քանի որ բնաւ չենք ընդունիր
բունն միջոյններով կատարուած ուրե-
րապետութիւն : Մեր երջանկութիւնը
զերծ է ուրեք յարձակումէ . անկա նիւ-
թական ուժէ կախում չունի , այլ մեր հո-
գիին ուժէն : Դուք մեզ անիրաւարար
կ'ամբաստանէք նաեւ թէ ոչ մէկ գոյք
մեր ստացուածքը կը նկատենք : մենք բո-
լոր մեր ունեցածը կը բաժնենք պէտք
ունեցողներուն միջեւ : Իրաւ է որ խաղող
կը ծախենք , բայց ստիկա պարզապէս ապ-
րուստի միջոց մը ձեռք բերելու համար է
եւ ոչ թէ զբամ գիզելու : Եթէ մէկը ու-
զէր զանոնք մեր ձեռքէն առնել , յօժա-
րակամ պիտի տայինք : Ծիշտ միեւնոյն
պատճառով վախնալու բան մը չունինք
բարբարոսներու արշաւանքէն . եթէ անոնք
բաղձային զմեզ զրկիլ մեր աշխատութեան
արդիւնքէն , անմիջապէս տեղի պիտի տա-
յինք , եթէ պնդէին որ մենք իրենց համար
աշխատինք , իսկոյն պիտի ընէինք ուրա-
խութեամբ , եւ բարբարոսները ոչ միայն
ուրեք պատճառ չպիտի ունենային մեզի
սպաննելու . այլեւ ատիկա փեսակար
պիտի ըլլար բուն իսկ իրենց շահուն . այս
կէտը շատ շուտով պիտի հասկնային եւ
յետոյ պիտի սկսէին զմեզ սիրել . ոչնչապէս
որ մենք նուազ պիտի տառապէինք անոնց-
մէ , քան այն լուսաւորեալ մարդոցմէն
որոնց մէջ կ'ապրինք եւ որոնք կը հալա-
ծեն զմեզ : Դուք կը պնդէք թէ ընկերա-
յին կազմակերպութիւնը կարելի է միմիայն
անհատական ստացուածքի սկզբունքի չը-

նորհիւ, թէ իւրաքանչիւր ոք այն ատեն
միայն կը յաջողի իր սպարոստը ճարել
երբ իրեն սեփական ստացուածք ունի :
Արդ, այս սկզբունքը անարգարութեան
վրայ հաստատուած է: Եւ յիշաւ ի՞նչ կը
տեսնենք, բնաւ բան մը չունեցողները,
գերիները, աղատագրութեանը, աղքատ-
ներն են որ իրենց աշխատութեամբ կը
նպաստեն հարստութիւն գիգելու: Իսկ
անոնց հրամայողները, մեծերը, ծոյլերը
ուրիշ ճիգ չունին ընելիք եթէ ոչ հրա-
մաններ տալ, եւ ահա ամբողջ աշխարհի
հարստութիւնը անոնցն է: Դուք մեզ
կ'ամբաստանէք թէ օգուտ կը քաղենք
իրաց այս վիճակէն, որ ուրիշ բան չէ եթէ
ոչ տիպիին շահագործումը պօքաւորին
կողմէ: Եթէ իրապէս մեր դործերը կը
հակասեն մեր խօսքերուն, մենք խաբւեա-
ներ ենք եւ անօգուտ է ժամաւտճառ ըլ-
լալ մեզի հետ վիճաբանելու: Երբեք հետեւ
մենք արհամարհանքի միայն արժանի ենք,
եւ այդ արհամարհանքը մենք ուրախու-
թեամբ կ'ընդունինք որովհետեւ մեզի ա-
ռիթ մըն է աւելի խոնարհելու, ինչպէս կը
հրամայէ մեզի մեր սուրբ հաւատքը: Եթէ
ընդհակառակն անկեղծ եռանդով մը կ'աշ-
խատինք հասնելու այն նպատակին որուն
կը ձգտին մեր ամենուս ճիգերը, այն ա-
տեն ձեր ամբաստանութիւններն անիրաւ
են, եթէ մեր եղբայրները եւ ես կապրինք
համաճայն մեր Տիրոջ հաստատած օրէնք-
ներուն, առանց բռնութեան եւ առանց
աշխարհային ինչքեր գիգելու ջանքին :
Մեր նպատակը չէ աշխարհային արդիւնք-
ներ ձեռք բերել, հարստութիւն, իշխա-
նութիւն, պատիւ. — քանի որ անոնցմէ
ոչ մէկը կը փնտռենք — այլ բոլորովին
տարբեր արդիւնքներ, եւ առանց կը ձգտինք
այնքան եռանդով որքան դուք հեթանոս-
ներդ կը փնտռէք երջանկութիւնը: Բայց
մենք երջանկութիւնը բոլորովին տարբեր
կերպով կ'ըմբռնենք ձերինէն: Դուք եր-
ջանկութիւնը կը փնտռէք իշխանութեան,
փառքի եւ հարստութեան մէջ, մեր հա-
ւատքը մեզի կը սորվեցնէ թէ անիկա կը
գտնուի խոնարհութեան մէջ եւ ոչ թէ
բռնութեան, քայարձակ վեհանձնութեան

մէջ եւ ոչ թէ անձնատէր շահամոլութեան:
Ինչպէս որ ծաղիկները դէպի լոյսը եւ ա-
րեւը կը ձգտին, ճիշտ այնպէս մենք կը
յոռաջանանք դէպ ինչ որ երջանկութիւնը
կը կոչենք, ինչ որ մեր հոգիին փրկու-
թիւնն է: Մենք չենք յաջողիր բոլոր մեր
բաղձացածները կատարելու՝ այս երջան-
կութեան հասնելու համար, մենք տակա-
ւին կատարելապէս չենք յաջողած ջնջել
բուռն միջոցներու դիմելու սովորութիւնը
եւ ստացուածքի վրայ անարժուած դա-
ղափարները: ասիկա շատ ճիշտ է, բայց
կարելի է տարբեր կերպ ըլլալ: Օրինակի
համար, դուք ամէն ճիգ կը թափէք ամե-
նէն գեղեցիկ աղջկան հետ ամուսնանա-
լու, ամենէն շատ հարստութիւն գիգելու,
բայց մէկ հոգի մը կա՞յ ձեր մէջ որ կա-
տարելապէս յաջողած ըլլայ: Եթէ որսոր-
դի մը նետը վրիպի, պիտի դադրի՞ աշխու-
նետ արձակելէ, որովհետեւ քանի մը ան-
գամ պարտաւր դալած է: Մենք ալ միեւ-
նոյն կացութեան մէջ կը գտնուինք: Բը-
րիառտի վարդապետութեան համաճայն
մեր երջանկութիւնը կը գտնուի մեր նը-
մաններու սիրտին մէջ, որ կը վտարէ ամէն
բռնութիւն եւ չընդունիր նիւթական
ստացուածքներ ունենալու գաղափարը:
Ամենքս ալ երջանկութիւն կը փնտռենք,
բայց յաջողութիւնը կատարելապէս չի
պատկեր մեր ջանքերը: ասկէ զատ ամենքս
ալ միեւնոյն եղանակով չենք փնտռեր
զայն եւ միեւնոյն աստիճանով չենք հաս-
նիր անոր:

ԼԷՈՆ ԹՈԼՍՏՈՅ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԵՐՈՒՍՏԱՂԵՄԻ Պատրիարքին ընտրու-
թիւնը ստիպողական հանգամանք կ'առնէ,
Դատական Պաշտօնաւան եւ Կրօնից տես-
չութեան կողմէ եղած բերանացի դեկու-
ցումներուն վրայ, թէ պէտք է փութա-
ցնել խոնարհութիւնը: Ասիկա ծագում
առած է սա պարագային որ Երուսաղէմ

կարգ մը կալուածներուն մանկիւնը նկատուելուն դէմ Պատրիարքութեանը դիմումներ կ'ընէ կառավարութեան մօտ . յիշելով Երուսաղէմի Պատրիարքին տրուած ֆերմաններու տրամադրութիւնները : Կառավարութիւնը այդ առանձնաշնորհմանց վրայ խօսելու իրաւունքը կ'ուզէ տալ Պատրիարքին, իբրեւ Աթոռին օրինաւոր աւերձ կառավարութեան կողմէ պաշտօնապէս ճանչցուած, եւ Երուսաղէմի տեղապահութիւնը կը համարի բոլորովին առժամայն պաշտօն մը՝ միայն Պատր. ընտրութիւն կատարելու համար :

ԳԱԻԱՌՆԵՐԷՆ անապահովութեան եւ խժգոնութեանց լուրերը կը շարունակուին : Վանէն եւ Մուշէն հասած հեռագրեր կրկնու նոր սպաննութիւններ կը ծանուցանեն, ցաւալին ալն է որ աւաղակներու հետապնդութեան գործին մէջ զինուորական իշխանութիւնը անգործադրելի կը թողուն քաղաքային իշխանութեանց յանձնարարութիւնները, ինչպէս եղեր է Բաղէի նահանգին մէջ, Զինուորականութեանը պիտի Քուրդ աւաղակապետները ցուցուցած ներողամտութիւնը՝ մտահոգութեան մատնած է գաւառի Հայութիւնը, որ յոյսը դրած էր զինուորական մարմնին վրայ : Վանէն ուրիշ հեռագրեր կը գուժեն թէ աւաղակութիւնները կը շարունակուին տանդհատ : Կարգ մը զիւղերու մէջ երթեւեկութիւնները դադրած են : Միւր Մ'է վերջերս 15 ոստիկաններու վրայ յարձակելով բոլորին ալ հրացանները խլած է, Արձակի կողմն ալ 7 հայ լեռը առնելով փրկանք կը պահանջէ : Շատախ գաւառի Թաղ զիւղի Տ. Մկրտիչ քհն. եւս աղեկատու չեղանքով օգնութիւն կը խնդրէ աւաղակներու դէմ, որոնք գրգռուած՝ բնաջինջ ընել կ'ուզեն ամբողջ գաւառը, եւ սարսափահար ժողովուրդը չի համարձակիր տուններէն դուրս ելնել : Վերջին լուրերու նայելով, Վանայ նահանգին մէջ կարգ մը քուրդ պէյերու եւ աղաներու ընթացքը կասկած ծնուցած է թէ դադարի գիտում մը ունին եւ առիթի կը սպասեն ի գործ դնելու համար : Ազգ. Վարչութիւնը լուրջ խորհրդակցութեան առարկայ ըրած է

իրոյց այս տաղնապալի վիճակը :

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ առաջնորդ Տ. Զաւակն Եպիսկ. կը հեռագրէ թէ Պարզինի Ասորիները կը փորձեն տիրանալ տեղւոյն մասամբ աւերակ եկեղեցիին, որուն մէկ անկիւնը նորոգելով արարողութիւն կատարելու արտօնութիւն տրուած էր իրենց : Տ. Զաւակն Եպիսկ. այդ սահմանութիւնը արդիւնաւ համար պէտք եղած ձեռնարկն ըրած է, եւ կը խնդրէ Պատրիարքարանէն եւս՝ դիմում ընել տո որ անկ է :

ՀԱԼԷՊԻ առաջնորդ Տ. Շահէ Ծ. Վ.ի մեկնումին վրայ, ի բացակայութեան առաջնորդին գործերը կը վարէ Տ. Յարութիւն քհն. Եսայեան : Թղթակից մը այս առիթիւ շատ իրաւունքով կը հարցնէ թէ «Ինչո՞ւ արդեօք ֆահանայ փոխանորդները զոնե կիսով չափ նիւթապէս չեն վարձատրուիր, ինչպէս շիտաւս կը վարձատրուին կուսակիցի առաջնորդները կամ փոխանորդները : Քահանաներէն շատեր վեղաւորներն աւելի գործունէութիւն ցոյց տուած են, բայց մենք կ'անտեսենք, իբր թէ ասոնք անկարիւս պաշտօնականներ ըլլան, ըստ քմայս գործածելու համար դանոնք » : Թղթակցին այս արդարացի հարցումին տրուելիք բանաւոր պատասխանը սկզբնաւորութիւնը պիտի ըլլար քահանայական հարցին լուծման :

ՄԱԼԱԹԻՈՅ նորընտիր առաջն. տեղապահ Տ. Հմայեակ Վ. Պաղտատարեան իր պաշտօնատեղին հասնելով ջերմ համակրութեամբ ընդունուած է տեղացիներէն : Իր առաջին գործն եղեր է քաղաքին երեք թաղերու պիւտժէն միացնել՝ Քաղ. Ժողովին հետ խորհրդակցաբար : Մալաթիացին մեծ յոյսեր դրած է իր վրայ, բայց սպասողական դիրքի մէջ է, կ'ըսէ Թղթակից մը :

ԷՋՄԻԱՅԻՆ Սինօղը, Տփղիսի հոգեւոր իշխանութեան յանձնարարներ է դատաստանի յանձնել Պաթումի մէջ մեռնող Հայ-Լուսաւորչական Սարգիս Աւետիսեանի Հայ-կաթոլիկ կիներ, իր ամուսինը առանց ծէսի Հայ-կաթոլիկներու ղերեզմանատունը թաղել տուած ըլլալուն համար :

ՄԱՐՍՈՒՏԵԱՆ Ղեւոնդ Վ.ի հաշիւներ

բուն համար Ազգ. Ժողովոյ կողմէ տրուած վճռին՝ 11000 ոսկի պահանջքի դործադրութեան վրայ խորհրդակցելու համար Յակոբ Յակոբեան, Դաւիթ Տ. Մովսէսեան եւ Սարգիս Էսմէրեան էֆ. ներքէն կազմուած յանձնաժողովը կը լսենք թէ աւարտելու վրայ է իր աշխատութիւնը, եւ տեղեկագիրը պիտի ներկայացնէ Վարչութեան:

Հ. Բ. Բ. ՄԻՈՒԹԻԻՆԸ. — Շարժումն Ազգ. Թերթերուն մէջ գոհութեամբ կը կարգաւոր այս դերադանդորէն հանրագումարութեան նորանոր մասնաճիւղեր կազմուելը՝ Թուրքիոյ եւ արաւսահմանի մէջ Վառնայի մէջ կազմուած է նոր մասնաճիւղ մը՝ առեւտրական հրապարակի վրայ ծանօթ եւ գիրքի տէր անձնաւորութիւններէ: Անգամակցողներու թիւը հասած է 40ի, եւ կը յուսացուի քառասունիւ ի մօտոյ: Վառնայի մերձակայ Պալլըզ աւանին մէջ ալ մէկ ամիս առաջ մասնաճիւղ մը կազմուած է, եւ կ'աշխատուի Պուլիարիոյ ուրիշ քաղաքներուն մէջ ալ կազմուելու, մասնաւորապէս վերակազմուելու: Ռուսաճորի մասնաճիւղը որ ցարդ անուանական գոյութիւն մը միայն ունեցած է: Դնաւատելի են ալ տաթիւ Տ. Յովհան քհնյ. Մանգակունիի ջանքերը:

* Պաղտատի մէջ եւս կազմուած է Հ. Բ. Բ. Միութեան մասնաճիւղ մը: Մինչեւ Յուլիս 17 անդամաց թիւն է 42՝ 3523 զրշ. մօտք, եւ 382 1/2 զշ. ամսավճարով: Կը յուսացուի կարճ ժամանակի մէջ այդ թիւն ու գումարները ստուարացնել:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Պոլիս ժամանեցին Ռուսահայ հանրածանօթ գրագէտ Պ. Աւետիս Անարոնեան, եւ Մշակի խմբագիր Պ. Համբարձում Առաքելեան:

ՊԱՐԱԿԱՆԱՅՈՑ ՏԱԳՆԱՊԸ

Պարսկաստանի հայոց վիճակը տագնապալի է միշտ, չարունակ ջարդի սարսափին եւ սպառնալիքին տակ կը զըտնուին: Հորիզոնի կարծիքը թէ կարգ մը անխոհմիտներու յախուսն ընթացքը վըտանդի կը մասնէ ամբողջ Պարսկահայութիւնը, ծաւալ կը գտնէ լրջամիտ անձերու մէջ: Ատոնցմէ է Արշակ խան Գորդեան, Պարսիկ շահերու նախկին գօրավար եւ սիրահտարի աշակերտ: Ժամանակ տուից իր մէկ նամակն առ Եփրեմ խան, որով կը յորդորէ եւս կենալ Մէհմէտ Ալիի դէմ կտուելէ, քանի որ յաջողութեան պարագային հայերու օգուտը շատ աննշան պիտի ըլլայ, իսկ ձառողուածի պարագային անոնց համայնա-

ջինջ կտրուտը դրեթէ բացայայտ է: Բիւզանդիոն եւս հրատարակեց Արշակ խանի՝ Պաքուէն անցած ատեն թղթակցի մը հետ ունեցած մէկ տեսակցութիւնը, որուն մէջ նոյն կարծիքները կը կրկնէր եւ կը հաստատէր: Թէեւ Գովհասեան թերթերէ մասնք ամբաստանեցին Արշակ խանը, իբրեւ Մէհմէտ Ալիի կուսակից եւ հակասամանադրական, բայց ծանօթ գրագէտ-հրապարակագիր Լ. Օ. Հորիզոնի մէջ չափազանցութիւն կը համարի Եփրեմի մասնակցութիւնը, որ կը վտանգէ Պարսկահայերը: Իսկ Պ. Համբարձում Առաքելեան, թէեւ այնքան յոռետես չէ, այսուհանդերձ տօնքիջօթութիւն կանուանէ եօթը միլիոն բնակչութեան մը մէջ հազիւ 70000ի համարող հայ բնակչութեան մը յառաջընթաց յանդգնութիւնը:

Այս վերջին կարծիքը կը հաստատուի բացարձակապէս չլողոր եւ իրազեկ օտար անձնաւորութեան մը կողմէ, ֆրանսացի Պ. Շառլ Տէվէլ, որ Պարսկաստանի թղթատարական պետ եղած է ութ երկար տարիներ: Այս հայասէր անձնաւորութիւնը, որ Պարսկաստան ելթալէ առաջ աշխատակցած է Բոս Արմենիայի եւ Լը Մու. վրանսՍօսիայի, կը գովէ Արշակ խանը, կը մերժէ անոր Մէհմէտ Ալիի կուսակից ըլլալու ամբաստանութիւնը եւ կը հաստատէ անոր սահմանադրաւոր ոգին, ինքն ալ համակարծիք է Արշակ խանի, կը յայտարարուի թէ Մէհմէտ Ալի եւ իր համախոհները անպայման գրգռուած են Հայոց դէմ, զորս սահմանադրութեան հաստատման պատճառ կը համարին: «Ես կարող եմ հաստատապէս ըսել թէ անպատճառ կոտորած պիտի ըլլայ», ուստի կ'եզրակացնէ թէ Եփրեմ եւ իր ընկերները պիտի չեն միջամտեն, որովհետեւ անոր եւ իր ամբ համախոհներուն պատճառով Հայերը քաւութեան նսխադ պիտի դառնան:

ԿԱՐԵՒՈՐ ԱՁԴ

Այսօրունէ սկսեալ պաշտօնէ դադարած է Տաճարի ցրուիչ Պ. Յարութիւն ճգնաւորեան: Մեզի հետ հաշիւ ունեցողները պէտք է այսուհետեւ վճարումներն ընեն նոր ցրուիչ Պ. Արշակ Վարդերեսեանի:

Արտօնատէր ՀՄԱՅԵԱԿ ԲՂՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏԵՕՐԷՆԻՄԵՐԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԲՂՆՅ. ԿԵԶԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՐԱՄԱՃԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՂՋԿԱՆՅ ԳՈՒԷՃ, ՍԿԻՒՏԱՐ

Ամերիկեան աղջկանց Գուէճը կը բացուի Սեպտ. 14ին: Այս Գուէճը Թուրքիոյ մէջ միակ հաստատութիւնն է որ կանանց բարձրագոյն կրթութիւն կուտայ: Այս վարժարանին մէջ կ'աւանդուին՝ Գիտութիւնք, Պատմութիւն, Ուսողութիւն, Գրականութիւն, Մանկավարժութիւն, Փիլիսոփայութիւն եւ Լեզուներ:

Գուէճը չորս տարուան դասընթացք մը ունի: Անդդիւրէն չգիացողներուն դիւրութեան համար մասնաւոր դասապահ մը բացուած է այդ լեզուին ուսուցման համար: Սկիւտար Օր. Տայեանի, Ատափաղաքի աշուհեաց վարժարանի եւ ուրիշ համահաւասար հաստատութեանց չըջանաւարտները Գուէճի առաջին կարգը կ'ընդունուին առանց ըննութեան:

Գուէճի նախապատրաստական Բաժինը կը գտնուի Անաւուստիւղ: Կ'ընդունուին միայն այն աշակերտուհիները որոնք տասը տարեկանէն վեր են:

Գիշերօթիկները պէտք է օր առաջ դիմեն եւ 2 օսկի աւանդ ձգելով ապահովեն մուտքը առաջիկայ տարուան համար:

Դիմել Տնօրէնութեան Անաւուստիւղ ամէն երեքշաբթի օրերը, առտուան ժամը 10—12:

5—5

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԺԻՐԱՅՐ.— Յեղափոխական առաջնաչին կենսագրութիւնը (1881-1884): Տ. Դեորգ Ծ. Վ. Ասլանեան, Ռոտտսթոյի եւ առանդուն առաջնորդը, իր նկարուն եւ զգայուն ոճով պատկերացուցած է կեանքը յեղափոխական առաքեալին, իր ամէս կողմերով, մանկութենէն սկսեալ: Գործը զարգարուած է բաղմամբիւ պատկերներով, որոնք կը ներկայացնեն Ժիրայրը, իր ընտանեկան պարագաները, Մուրատը, իր ուսուցիչները, քաղաքներն ուր ծնած, ապրած ու գործած է, եւն: Երկրորդ հատորով մը հեղինակը առաջադրած է նկա-

մադրել Ժիրայրի գործունէութիւնը՝ Երզնկայի, Կիլիկիոյ, Կեսարիոյ եւ Սնկիւրիոյ եւն: մէջ, մինչեւ իր կախաղան բարձրանալը: Հրատար. Գըլքճեան զրատան Դին Յու կէս զրշ:

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԵՐԿՍԵՒ ՎԱՐԺԱՐԱՆ

(ԵՕԹՆԱՄԵԱՅ ԻՏԱՏԻ)

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ, ՍԿԻՒՏԱՐ

ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՎԱԿԵՐԱՑՈՒԱԾ ՄԵԱՐԻՖԵՆ

Հաստատութիւններս, որոնց արդիւնքները գնահատուեցան մեծապէս, եւ որոնց վկայականները վաւերացուեցան օրն օրին կրթական նախարարութենէն, ամէնէն մեծ երաշխիքն են թէ իրենց նպատակին կը ծառայեն լիովին, թէ կը սորվեցնեն բաց ի Հայերէնէ, Օսմաներէն, Պրանսերէն, Անգլիերէն եւ Գերմաներէն լեզուները, եւ դիտական եւ իմաստասիրական ուսումները, տալով հայկական ընտիր դաստիարակութիւն մը երկսեռ Հայ պատանիներու, պատրաստելով զանոնք ամէն ասպարէզի եւ համալսարանական ուսման, ձեռամբ 30է աւելի փորձ, հմուտ եւ մասնագէտ ուսուցիչներու:

Ի մօտոյ պիտի բացուի հոմալսարանական դասարան մը, մանկավարժական, գիտական, առեւտրական եւ լեզուական ճիւղերու: Քսան թիւը բաւական պիտի սեպուի բանալու համար առաջին դասարանը: Վերաբացումը 1 Սեպտ. Եշ. դասերը պիտի սկսին 5 սեպտեմբեր, Բշ:

Աշակերտաց ընդունելութեան համար չրոյել ամէն ուրբաթ, ուղղակի Տնօրէնութեան, աղջկանց վարժարանը, առաւօտէն մինչեւ իրիկուն, ու Դշ. եւ Եշ. օրերը ժամը (Ը. Թ.) 10էն վերջ Սիւմպիւլի խան, Հիմնադիր-Տնօրէնին դասադիրքերուն եւ բառարաններուն կեդրոնատեղին:

Հիմնադիր-Տնօրէն

ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

5—5

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՔ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ չԱՅՈՑ

Լոյս տեսաւ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ հրատարակութեամբն եւ «Մասթէոսեան» սպագրութեամբ՝

ԲԲՈՅ. ՅՈՎ.Է. ՅԱԿՈԲԵԱՆԻ

ՆՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐՈՒԹՅՈՒՆ

Գին՝ 5 դանեկան արծաթ: Վաճառատնէն զին է՝ Միացեալ Ընկերութեանց գրասենեակը, Պոլիս, Պահճէ Գաղութ, Ստաղդիյէ խան, Թիւ 23 եւ 27:

Ծանօթ. — Հրատարակ ելած մէջն մի օրինակ ընկերութեան Կնիւթէ պէտք է կրէ անպատճառ:

Ֆրատարակութիւն Ա. ԵԱԶԸՃԵԱՆ գրատան

ԱՐԵՎԱՆՑԱՆ ԱՐԱՊԵԱՆ

ՈՍԿԵՍԱՏԵՆԻԿ ՖՐԱՆՍ. ԼԵՂՈՒԿ

Ա. ԳԻՐԻՔ

Մանկավարժական նորագոյն մեթոտով եւ խնամով պատրաստուած Ոսկեհասեակիներու շարք մը, որուն նպատակն է Հայ ուսանողութիւնն օտար լեզուի ընթերցանութիւնը սորվելու վարկենէն իսկ հետզհետէ խօսելու ընտելացնել դէմ յանդիմանական ուսուցմամբ:

Գին ներկայ Ա. գիրքին 3 ղըշ: Մամլոյ աակ են Բ. եւ Գ. գիրքերը: Զերմապէս կը յանձնարարուի Ազգ. վարժարաններուն:

ՄՏԱՑՈՒԱԾ ԳԻՐԳԵՐ

ՔՕԼԷՐԱՅԷՆ ԶՎԱՐԱԿՈՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ. — Գրեց Կարապետ Գաւսպուրեան. — Գերազանցօրէն այժմեական եւ շահագրգռական տետրակ մը, համաճարակին առթիւ: Պոլիս. Տպագր. Տ. Տօղրամահեան: Գին 40 փարայ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՆԱՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ,

ԱՌՁԵՈՒՆ ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅ-ԱՇԽԱՐՀԻԿ

Կը պարունակէ 1. ճոխ բառագումար մը ֆրանս. լեզուի, նշանակութիւնները ի հարկին ֆրանս. օրինակներով բացատրուած. 2. Արհեստական, զիտական եւ գրական հազարաւոր նորաբանութիւններ. 3. Նոր փոխառութիւններ եւ պատշաճեցումներ հայկազեան բառագիրքէ. 4. Բառագիրք մը ֆրանսերէնի մէջ դործածուած լատին, յոյն եւ օտարաբարառասութիւններու: 5. Ֆրանսահայ ճոխ բառացուցակ մը պատմական, աշխարհագրական եւ զիցաբանական անուններու:

Յարգ հրատարակուած նմանօրինակ բառագրոց վրայ իրական առաւելութիւններով օժտուած է սոյն բառգիրքը՝ պատուարեր թէ՛ հեղինակին եւ թէ՛ հրատարակիչներուն (Պալէնց եւ Պաղտատլեան գրատունները):

Գին՝ քաղցօնէ կաղմ 25 ղըշ, լաթակաղմ 27, կիսակաղմ 30, կաշեկաղմ 35 ղըշ:

ԳԻՆ 1 ՂՐՈՒԾ

Տպագր. Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

Սուրբան-Համալ Մօլա-Թաշը, Թիւ 16

Կ ՊՈԼԻՍ